ՄՈԳԻԼՅՈՎ-ՊՈԴՈԼՍԿ ՔԱՂԱՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Վ. Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ուկրաինական Մոգիլյով-Պոդոլսկ քաղաքի հայկական գաղութն ունեցել է շուրջ հարյուր հիսուն տարվա պատմություն։ Լեհահայ մյուս կենտրոնների նման այդ գաղութը ևս վայելել է ինքնավարության արտոնություն և բնակչության թվով համարվել է ամենախոշորներից մեկը Ռեչ-Պոսպոլիտայի սահմաններում եղած հայ գաղթօջախների մեջ։ Եթե Պոդոլյան երկրի կենտրոն Կամենեց-Պոդոլսկի հայ գաղութի վերաբերյալ հրապարակվել են մի շարք սկզբնաղբյուրներ և հետազոտություններ, բավականաչափ լուսաբանվել է նրա պատմությունը և խաղացած դերը լեհահայոց կյանքում, ապա նրանից ոչ այնքան հեռու գտնվող մոգիլյովյան գաղթօջախը անուշադրության է մատնվել։ Ճիշտ է, մի քանի ուսումնասիրողներ ու ճանապարհորդներ գրել են նաև այդ գաղութի, այնտեղ կառուցված եկեղեցիների մասին. հրապարակված է նաև մոգիլյովահայերի իրավական վիճակն արտացոլող 1743 թ. հրովարտակը, բայց և այնպես գաղութի պատմությունը դեռևս կարոտ է համակողմանի քննության։ Ներկա հոդվածով փորձ է արվում ի մի բերելու Մոգիլյովի հայ համայնքին վերաբերող նյութերը և ամփոփ ձևով վեր հանելու այդ գաղութի պատմությունը։

Ուկրաինական ՍՍՀ Վիննիցայի մարզում գտնվող Մոգիլյով-Պոդոլսկ քաղաքը, որը հայտնի է նաև Մոգիլյով նա Դնեստրե անունով (հայկական աղբյուրներում՝ Մէյլով, Մօհիլով, Մոյիլով, Մոյլով)[1], Ուկրաինայի համեմատաբար երիտասարդ բնակավայրերից է, այն հիմնադրվել է Բրացլավյան վոյեվոդա Ստեֆան Պոտոցկու կողմից XVI դարի վերջերին։ Դնեստրի ձախ ափին կառուցված այդ քաղաքը, գտնվելով Ուկրաինայից դեպի Մոլդավիա և ավելի հարավ՝ Թուրքիա տանող ճանապարհի վրա, զարգանալու լայն հեռանկարներ ուներ և շատ չանցած այն վեր է ածվում առևտրական կարևոր կենտրոնի։ 1643 թ. Մոգիլյովում հիմնադրվում է մաքսատուն, ավելի ուշ այնտեղ կանոնավոր կերպով կազմակերպվում էին տոնավաճառներ։

Պոտոցկի լեհ իշխանները, որոնց ժառանգական սեփականությունն էր Մոգիլյովը, անում էին ամեն ինչ իրենց քաղաքի բնակչությունն ավելացնելու, այն առևտրա-արհեստավորական շահավետ կենտրոն դարձնելու համար։ Բայց

---

[1] Ստեփաննոս Դյուվեր Ագոնցն իր «Աշխարհագրութեան» մեջ Մոգիլյով-Պոդոլսկը շփոթել է Դնեպրի ափին գտնվող բելոռուսական Մոգիլյով քաղաքի հետ։ Նա գրում է՝ «Մոյլով. ըստ մոսկ. Մօկիլով, կամ Մօկիլէվ։ Քաղաք բարեշէն և բազմավաճառ առ Տներեր գետով. ուր մոսկովք բազում առևտրութիւնս առնեն։ Եկեղեցին հայոց կոչի յանուն Աստուածածնի. որոյ կալուած է գիւղն Ռաշքով. յայս եկեղեցի գնան և լէհք. քանզի չիք նոցա եկեղեցի սեփական» (տե՛ս Ստեփաննոս Դյուվեր Ագոնց, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն երկրորդ, Եւրոպիա, հատ. Բ, Վենետիկ, 1802, էջ 157—158)։ Վերը բերված պարբերության մեջ սկզբի մասը վերաբերում է բելոռուսական Մոգիլյովին, իսկ շարունակությունը («Եկեղեցին հայոց...»)՝ ուկրաինական Մոգիլյովին։

քաղաքի զարգացմանը խոչընդոտ էին հանդիսանում թուրքերի հաճախակի հարձակումները։ Մոգիլյովի համար հատկապես անբարենպաստ վիճակ ստեղծվեց, երբ Պոդոլյան երկիրը 27 տարի շարունակ (1672—1699 թթ.) գտնվում էր թուրքական տիրապետության տակ։ Սակայն դրանից շատ չանցած, շնորհիվ Պոտոցկիների ձեռք առած միջոցների, քաղաքը կրկին սկսում է բարգավաճել։ 1776 թ. տվյալներով բնակչության խտությամբ Մոգիլյովը գրավում էր առաջին տեղը ողջ Պոդոլյեում[2]։

Հայերը Մոգիլյովում մշտական բնակություն են հաստատել XVIII դարի առաջին տասնամյակներում։ Մինչ այդ, ինչպես նկատել է լեհ պատմաբան Վլադիսլավ Պոբուգ Գուրսկին, նրանք այդ քաղաքը գալիս էին որպես հյուրեր[3]։ Քաղաքային կյանքի այլևայլ մարզերում ստանալիք առանձնաշնորհումներից հրապուրված, Մոգիլյովում հաստատվել էին նաև մեծ թվով մոլդավացիներ և հույներ։ Լվովի արխիվներից մեկում պահպանվել է այն հրովարտակի բնագիրը, որը 1743 թ. տրվել է Մոգիլյովի հայերին Կիևի վոյեվոդա Ստանիսլավ Զալեսիուշ Պոտոցկու և նրա տիկնոջ՝ Աննա Պոտոցկայայի կողմից։ Հրովարտակը, որը հրատարակված է Օդեսայում 1864 թ.[4], Մոգիլյովում բնակվող հայերին նախ և առաջ շնորհում է սեփական ինքնավարության իրավունք՝ ճիշտ այնպիսին, ինչպիսին ուներին Լվովի, Կամենեց-Պոդոլսկի և այլ քաղաքների հայերը։ Դատական իշխանությունը գտնվելու էր հայ վոյթի ու երդվյալ դատավորների ձեռքում, որոնք ղեկավարվելու էին դեռևս 1519 թ. լեհական Սիգիզմունդ Առաջին թագավորի կողմից հայերի համար վավերացված օրենսգրքով, որը հայտնի է «Լեհահայոց դատաստանագիրք» անունով։ Դա ոչ այլ ինչ էր, եթե ոչ Մխիթար Գոշի հռչակավոր «Դատաստանագրքի» խմբագրված և լեհական պայմաններին հարմարեցված օրինակը։

Ըստ Պոտոցկի իշխանների տված հրովարտակի, հայերը Մոգիլյովի ռատուշայում իրենց դատարանի համար ստանալու էին հատուկ սրահ։ Սա ևս կարևոր առանձնաշնորհում էր։ Ռատուշան ղեկավարում էր ողջ քաղաքը և հայկական դատարանի առկայությունն այնտեղ ավելի մեծացնում էր վերջինիս հեղինակությունը ոչ միայն հայերի, այլև օտարների աչքում։ Փաստորեն հայ համայնքի դատական մարմինը դիտվելու էր որպես քաղաքի ղեկավարմանը մասնակցող վարչության մի մասը։ Իրենց հրովարտակով Պոտոցկիները հայ գաղթականներին թույլ են տալիս ազատորեն զբաղվելու առևտրով, մասնակցելու տոնավաճառներին։ Հայերը կարող էին զբաղվել լիկյորների և զանազան այլ խմիչքների պատրաստման գործով, իրավունք էին ստանում գինետներ բաց անել։ Փաստորեն Պոտոցկիները հայերին իրենց իրավունքներով հավասարեցնում էին լեհերի և ուկրաինացիների հետ։ Բնական է, որ այդ քաղաքի առաջընթացի հետ զուգահեռ մեծանում էր նաև հայկական գաղութը։

Մոգիլյով-Պոդոլսկի հայ համայնքը կազմավորվել և համալրվել է գլխավորապես լեհահայ գաղթօջախներից դուրս եկած հայերով։ Դրանք վաղուց կա-

---

[2] Władysław Pobog Górski, Powiat Mohylowski w gubernii Podolskiej, Kraków, 1902, էջ 209։

[3] Նույն տեղում, էջ 208։

[4] Kopia prawa ormianskiej juryzdykcyj w Mohilowie (տե՛ս Silva rerum księdza Szymona Krzystofowicza, karonika katedry Kamienieckiéj officiała. Podolskiego proboszcza Mohylowskiego (1763—1808). Wydał Stanislaw Krzyżanowski, Odessa, 1864, էջ 31—37)։

թոլիկություն ընդունած հայերի սերունդներ էին և բնակվելով այդ քաղաքում, բնականաբար, համախմբվել էին հայկական նորակառույց կաթոլիկ եկեղեցու՝ կոստյոլի շուրջը։ Պետք է ենթադրել, որ Մոգիլյովում հաստատվել էին նաև որոշ թվով լուսավորչական հայեր, որոնք կարող էին եկած լինել Մոլդավիայի ու Բուկովինայի հայկական կենտրոններից, գուցե և Մոգիլյովից ոչ այնքան հեռու գտնվող Խոտին քաղաքից։ Այդ փոքրիկ քաղաքի հայ գաղութը, որն ըստ պրոֆ.

Մոգիլյով-Պոդոլսկի հայկական «Անարատ հղության սուրբ Աստվածածնի» եկեղեցին։



Մոգիլյով-Պոդոլսկի հայկական եկեղեցու ներքին տեսքը։

Վլադ Բընբցյանուի հիմնադրվել է XIV—XV դարերում[5], և որը 1782 թ. կազմում էր քաղաքի բնակչության մեծ մասը[6], կարողացավ դիմանալ ժամանակի փորձությանը և մինչև վերջ հավատարիմ մնաց հայ լուսավորչական եկեղեցուն։ Շատ լուսավորչական հայեր էին մնացել նաև Բուկովինայի հայկական գաղութներում։ XIX դարի կեսի տվյալներով Բուկովինայի 2400 հայերից կաթոլիկներ էին միայն 475-ը[7]։ Մոգիլյովում լուսավորչական հայերի առկայության մասին է վկայում այն հանգամանքը, որ Խոտինի հետ միասին այդ քաղաքը ևս հիշատակվում է էջմիածնին ենթակա թեմերի այն հայտնի ցուցակում, որը 1763 թ. Սիմեոն Երևանցի կաթողիկոսը գրանցել է «Ջամբռ» անվանված իր մատյանում[8]։ Պետք է կարծել, որ լուսավորչական հայերն այնքան էլ երկար

---

5 Проф. Влад Бэнэцяну (Бухарест), Армянские колонии на территории Румынии по данным топономии, տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1962, № 2, էջ 172։

6 Я. Р. Дашкевич, Розселення вірменів на Україні в XI—XVIII ст., «Український історико-географічний збірник», випуск перший, Київ, 1971, էջ 174։

7 Լեվոն Բաբայան, Հայերը Մոլդավիայում և Բուքովինայում, Թիֆլիս, 1911, էջ 145։

8 Սիմեոն Երևանցի, Ջամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 45։

չեն մնացել Մոգիլյովում, ուստի և ավելի ուշ ժամանակներում էջմիածնում կազմված ցուցակներում Մոգիլյովի անունը բացակայում է։

Մոգիլյովի հայերի քանակական կազմի մասին տեղեկությունները վերաբերում են XVIII դարի 70-ական թթ.։ Ըստ Վ. Պ. Գուրսկու 1776 թ. Մոգիլյովում եղել է 1167 տուն, բնակչության թիվը ենթադրվում է 12000։ Գուրսկին գրում է, որ հայերը կազմել են քաղաքի բնակչության համարյա կեսը[9], այսինքն շուրջ 6000 մարդ։ Այն ժամանակվա համար դա փոքր թիվ չէր։ Անհրաժեշտ է նշել, որ այդ տարիներին խիստ նվազել էր Գալիցիայում, Պոդոլյեում ու այլ վայրերում ապրող հայերի թիվը։ 1782 թ. տվյալներով Հորոդենկայում բնակվում էին 410, Բրոդիում՝ 25, Բերեժանիում՝ 171 հայեր։ Զոլոչևի և Ժվանեցի հայերի թիվը 1791 թ. հաշվվում էր տասնյակներով[10]։ Լվովի հայ գաղութն այդ տարիներին (1783 թ.) ներկայացնում էին 212 հայեր, իսկ Ստանիսլավինը՝ 500[11]։ Կամենեց-Պոդոլսկի մասին տվյալները վերաբերում են ավելի ուշ ժամանակների՝ Մինաս Բժշկյանի այցելության օրերին (1820 թ.) այնտեղ հաշվվում էր 70 հայ ընտանիք։ Հայերի այսչափ նվազումը բացատրվում է նախ և առաջ այն բանով, որ կաթոլիկություն ընդունելուց հետո գաղութներում ծավալված խառն ամուսնությունները շատ նպաստում էին նրանց ապազգայնացմանը՝ օտարների, առանձնապես լեհերի հետ ձուլման գործին։ Ազգաձուլումը կար և նախքան կաթոլիկության բռնի տարածումը, բայց այժմ այն ավելի մեծ ծավալ էր ընդունել։ Բացի այդ, գաղթել էր այլ վայրերից հայերի գաղթը դեպի Լեհաստան և, ընդհակառակը, չհաշտվելով իրենց պապերի կրոնը կորցնելու իրողության հետ, շատ հայեր լքում էին Լեհաստանը և հեռանում գլխավորապես Մոլդավիայի ու Տրանսիլվանիայի հայաշատ վայրերը։ Առևտրական ճանապարհների փակվելու և առևտրի անկման պատճառով շատ հայեր ապրուստի միջոցներ էին որոնում գյուղական վայրերում, նրանցից ոմանք կալվածքներ էին ձեռք բերում գյուղերում և զբաղվում էին գյուղատնտեսությամբ։ Գաղութներն աստիճանաբար քայքայվում և դադարում էին գոյություն ունենալուց։ Նույն բանն էր սպասվում նաև Մոգիլյովի հայերին, սակայն XVIII դարի կեսերը դեռևս վերելքի տարիներ էին այդ քաղաքի տնտեսության համար, ուստի և բարգավաճում էր նաև հայ գաղութը, որը բնակչության թվով այդ ժամանակ ամենախոշորն էր Աջափնյա Ուկրաինայում։

Հայկական թաղամասը, որը գտնվում էր Մոգիլյովի կենտրոնական մասում՝ Դնեստրի ափին, կառուցապատված էր լավ տներով ու խանութներով։ Շուկան շատ մոտ է եղել թաղամասին[12], որը և նպաստավոր է եղել հայ առևտրականների ու արհեստավորների համար։ Մոգիլյովի գլխավոր փողոցը հայերով բնակեցված լինելու պատճառով կոչվել է «Հայկական փողոց»[13]։ Երևան են գալիս մեծահարուստ հայ ընտանիքներ, որոնք նշանակալի դեր են

---

[9] W. P. Gorski, նշվ. աշխ., էջ 209, հմմտ. Я. Р. Дашкевич, Росселення вірменів на Україні в XI—XVIII ст., էջ 168։

[10] Я. Р. Дашкевич, նշվ. աշխ., էջ 157—161։

[11] В. В. Грабовецкий, Армянские поселения на западноукраинских землях. «Исторические связи и дружба украинского и армянского народов», сборник материалов научной сессии, Ереван, 1961, էջ 107—108։

[12] Մ. Բժշկյան, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, Վենետիկ, 1830, էջ 160։

[13] Լ. Մաղիրյանց, Հայոց մեծ գաղթականությունը ԺԲ դարում և նորա վիճակը Լեհաստանում, «Արաքս», Ս. Պետերբուրգ, 1889, գիրք Ա, հունիս, էջ 126—127։

սկսում խաղալ ոչ միայն գաղութի, այլև ողջ քաղաքի կյանքում։ Այդ ընտանիքներից մի քանիսի տոհմանունները Վ. Պ. Գուրսկին բերել է իր գրքում (Կիրկորովիչներ, Ագոպորովիչներ, Պիսարովիչներ, Կալուստովներ, Ավեդիկովներ, Զայկովիչներ և այլն)։ Մոգիլյովի նշանավոր հարուստներից է եղել Յան Քժիշտոֆովիչ Սեթովը, որը հայկական դատարան ստեղծվելուց հետո ընտրվել է վոյթ (դատավոր) և այդ պաշտոնում մնացել մի շարք տարիներ[14]։

Մոգիլյովում հաստատված հայերի հիմնական զբաղմունքն առևտուրն ու արհեստներն էին։ Քաղաքի մոտիկությունը Մոլդավիայի և Հունգարիայի վաճառականական կենտրոններին, ինչպես նաև նավարկելի Դնեստր գետը, որի գլխավոր լաստային անցումը գտնվում էր հենց Մոգիլյովի մոտ, մեծ դյուրություններ էին ստեղծում առևտրի համար։ Լեհահայ պատմաբան Սադոկ Բարոնչն իր «Ակնարկ հայոց պատմության» գրքում գրում է, որ Մոգիլյովի հայ առևտրականները ոչխարների ու երինջների մեծ հոտեր էին գիրացնում Բեսարաբիայի տափաստաններում, հետո մորթում էին և միսը վաճառքի հանում Եվրոպայի հյուսիսային մասերում։ Ոչխարների ու այծերի կաշիները հատուկ ձևով մշակում էին, ներկում զանազան գույներով և արտահանում Բրոդի ու Լիտվա։ Մոգիլյովի հայերը առևտրական նպատակներով հասնում էին մինչև Ստամբուլ[15]։ Արտահանման ու տեղում վաճառելու նպատակով մսի մշակումը կատարվում էր ճիշտ այնպես, ինչպես լեհահայ և մոլդավահայ մյուս գաղութներում։ Մսից պատրաստում էին զանազան երշիկներ ու ապուխտներ, իսկ ճարպն օգտագործում էին օճառի ու մոմի արտադրության համար[16]։ Հայերը Մոգիլյովում ունեին բազմաթիվ խանութներ, ինչպես նաև գինետներ, որտեղ վաճառում էին իրենց փոքրիկ գործարաններում արտադրված ոգելից խմիչքները։ Նրանց մեծ եկամուտներ էր բերում հատկապես Արևելքի հետ կատարվող առևտուրը։ Լեհ հետազոտող Վլադիսլավ Պաբուգ Գուրսկին գրում է, որ Թուրքիայից բերվող ապրանքները կուտակվում էին Մոգիլյովում և ապա այնտեղից տարածվում ողջ երկրով մեկ[17]։ 1780 թ. իշխան Ս. Շ. Պոտոցկին թագավորից կարողանում է ստանալ Մոգիլյովում երկու տարին մեկ անգամ տոնավաճառ անցկացնելու թույլտվություն։ Հետագայում տոնավաճառների թիվը Մոգիլյովում տարեկան հասցվում է ութի[18]։ Այս հանգամանքն, անտարակույս, ավելի է մեծացնում քաղաքի դերը որպես առևտրական կենտրոնի։

Քաջ տիրապետելով բարձրորակ կարմիր գույնի կաշի ստանալու տեխնոլոգիային, որը երկար ժամանակ եղել է այդ վայրերում հաստատված հայերի մենաշնորհը, նրանք կարողացել են ամբողջովին իրենց ձեռքը վերցնել կաշվի

---

14 W. P. Górski, նշվ. աշխ., էջ 209։

15 Sadok Barącz, Rys dziejów ormiańskich, Ternopol, 1869, էջ 162։

16 Դեմետրիոս Տանը ուշագրավ նկարագրություն է թողել այն մասին, թե ինչ էին պատրաստում մսից Մոգիլյովից ոչ այնքան հեռու գտնվող Սուչավայի հայ գաղութի մսագործները։ «Հայք կգբաղին նաև մսավաճառությամբ,— գրում է նա,— եղան և ոչխարի մսի չոր, կարծր և մխյալ երշիկներ կշինեն, զորոնք իրենց ձևին համեմատ «սալամի, սուճուգ, փոդքովնե» կանվանեն. նաև ոչխարի և եղան միս կապխտեն, զոր «պուժենիցա» կամ «փաստրմա» կկոչեն։ ...Գիտեն նաև «սալխե» (սպանդանոց) մորթված անասնոց ճարպին ճրագ և օճառ դինել, որ գործույն կօգնեն նաև կանայք» (տե՛ս «Դեմետրիոս Տանի Արեվելյան Հայք ի Պուքովինա», թարգմ. Հ. Գրիգորիս վ. Գալեմքերյան Մխիթ. ուխտեն, Վիեննա, 1891, էջ 65)։

17 Wł. P. Górski, նշվ. աշխ., էջ 209։

18 Михайло Карачківський, Матеріяли до історії міст на Поділлі наприкінці XVIII віку «Исторично-географічний збірник», т. IV, Київ, 1931, էջ 184։

արտադրության գործը և հաջողությամբ բավարարել տեղական, ինչպես նաև հարևան բնակավայրերի շուկաների պահանջմունքները։ Հենվելով Ուկրաինայի հանրային գրադարանի ձեռագրային բաժնում պահվող XVIII դ. վերջերին վերաբերող նյութերի վրա, ուկրաինացի հետազոտող Միխայլո Կարաչկովսկին մի շարք ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Մոգիլյովի հայերի մասին։ Նա, օրինակ, գրում է, որ Մոգիլյովի հայերին պատկանող կաշվի մի գործարանում տարեկան մշակվում էր մինչև 15000 մորթի։ Ստացված կաշին իր որակով ոչնչով չէր զիջում արտասահմանյան կաշիներին[19]։

Հետաքրքրական է, որ գաղութի կազմավորման հետ սկզբնական ժամանակներում Մոգիլյովում ստեղծվել է հայ կաշեգործների համքարություն, որն ըստ ուկրաինացի պատմաբան Կատերինա Մելնիկի, շատ է նպաստել այդ արհեստի զարգացմանը Մոգիլյովում[20]։ Հայ կաշեգործների համքարության կամ, ինչպես իրենք են անվանել, եղբայրության կանոնագրությունը հաստատվել է քաղաքային իշխանությունների կողմից 1745 թ. մայիսի 14-ին։ Սադոկ Բարոնչի վկայությամբ այդ կանոնագրությունը, որը կիրառվել է լեհահայ մյուս կենտրոններում ևս, կազմվել է Լվովում և հաստատվել 1620 թ. Լեհաստանի թագավոր Յան Կազիմիրի կողմից։ Ըստ կանոնագրության առաջին հոդվածի Մոգիլյովի հայ կաշեգործների ցեխային կազմակերպությունը կոչվել է «Ողջ Հայաստանի լուսավորիչ Գրիգոր Լուսավորչի անունով»[21]։ Այս ուշագրավ փաստը վկայում է այն մշտական հոգևոր կապի մասին, որ գոյություն է ունեցել հեռավոր այդ գաղթավայրի և հայրենի երկրի ու նրա ավանդույթների միջև։ Կանոնագրության մյուս հոդվածները որոշում են եղբայրության նոր անդամների ընդունելության, նրանց իրավունքների ու պարտականությունների, զեկավար մարմնի, ինչպես նաև կաշվի արտադրության և իրացման հետ կապված զանազան խնդիրներ։ Կանոնագրությունը, որը հրապարակված է Սադոկ Բարոնչի «Ակնարկ հայոց պատմության» գրքում, կարևոր սկզբնաղբյուր է լեհահայ գաղթօջախներում հայ համքարական կազմակերպությունների կառուցվածքն ուսումնասիրելու համար։

Արհեստավորական եղբայրությունից զատ Մոգիլյովում եղել են հայկական հոգևոր եղբայրություններ, որոնց նպատակն էր ապահովել հայերի հոգևոր դաստիարակության գործը, փոխադարձ օգնության և օժանդակության հիման վրա համախմբել նրանց սեփական եկեղեցու շուրջը, նյութական օգնություն ցույց տալ եկեղեցուն։ Մոգիլյովում գործել են հայկական երեք հոգևոր եղբայրություններ՝ Սուրբ Մոր մխիթարության եղբայրությունը, սա ամենահինն էր, հիմնվել էր 1761 թ., Սուրբ Աստվածամոր երիտասարդական (կրտրիձվորաց) եղբայրությունը և Սուրբ Երրորդության եղբայրությունը (հիմն. 1766 թ.)[22]։

Այս եղբայրություններն ունեցել են իրենց գանձարկղները, որտեղ հավաքված գումարները ծախսվել են հայկական եկեղեցու սպասավորներին վարձատրելու, ինչպես և եղբայրության անդամներին օգնություն ցույց տալու

---

19 Նույն տեղում։

20 К. М., Путевые очерки Подолия, оттиск из «Киевской старины», Киев, 1885, էջ 148։

21 Sadok Baracz, պշգ. աշխ., էջ 158։

22 Stan. Krzyżanowski, Kościoł N. Maryi Panny w Mohylowie nad Dniestrem, Krakow, 1867, էջ 26։

համար։ Կարելի է ենթադրել, որ Մոգիլյովի եղբայրությունները ևս ունեցել են իրենց կանոնադրությունները, ինչպիսիք ունեին հարևան քաղաքներում՝ Յազլովեցում, Յաշում, Բոտոշանիում, Ռոմանում գործող հայկական հոգևոր եղբայրությունները, բայց, դժբախտաբար, դրանցից մեզ չի հասել և ոչ մի օրինակ։

Առևտրով ու արհեստագործությամբ քաղաքին շատ օգուտներ բերող հայ բնակչության հոսանքը դեպի Մոգիլյով ապահովելու, ինչպես և եկվոր հայերին քաղաքի հետ կապելու համար իշխան Ս. Զ. Պոտոցկին միջոցներ է տրամադրում հայկական եկեղեցու կառուցման համար։ Հ. Զավարյանը լեհահայոց պատմությանը նվիրած իր ընդարձակ ուսումնասիրության մեջ նշում է, որ «Մոգիլեովում հայերը եկեղեցի ունին 1729 թ. սկսած»[23]։ Սա ճիշտ չէ։ Մոգիլյովի հայկական եկեղեցին, որին տրվել է Գրիգոր Լուսավորչի անունը, կառուցվել է շատ ավելի ուշ՝ 1742—1743 թթ.։ Մինաս Բժշկյանը վկայում է, որ «այս եկեղեցի յառաջագոյն էր փայտաշէն՝ կառուցեալ ի ծայր ընդարձակ բակին ի նոյն Փօթոցքի իշխանէ»[24]։ Եկեղեցին գտնվել է քաղաքի կենտրոնական մասում՝ Ս. Նիկոլայի կոստյոլի կողքին։ Նրա կառուցման ժամանակը, որ նշված է Ս. Բարոնչի գրքում՝ 1742 թ. հունվարի 9-ը[25], վերաբերում է, ըստ երևույթին, հիմնադրման օրվան։ Շինարարությունը տևել է ավելի քան մեկ տարի և ավարտվել է 1743 թ.[26]։ Պոտոցկի իշխանը որոշել է նաև եկեղեցու սպասավորներին տնտեսապես ապահովելու հարցը։ Կոստյոլում պաշտոնավարող քսենձի տարեկան ռոճիկը (880 զլոտի) չորս նվագով վճարվելու էր քաղաքի վարձակալման գումարներից, կրտսեր քահանայի և մյուս ծառայողների ապրուստի միջոցները հայթայթելու էին եկեղեցու ծխականները[27]։

Իր շրջագայության ընթացքում Մինաս Բժշկյանը Ռաշկով քաղաքում գտել է չափածո մի հիշատակարան, որը փաստորեն Մոգիլյովի առաջին հայ քահանայի ինքնակենսագրությունն է։ Երևում է, որ հիշատակարանի հեղինակ Ավգսենտ վարդապետը բավական կրթված անձնավորություն է եղել, քաջ տիրապետել է հայերենին։ Ավգսենտ Նիկողոսյանը (Ս. Բարոնչը գրում է Աուգուստին Միկոլաևիչ)[28] ծնվել է Լվովում 1699 թ., լուսավորչական հայերի ընտանիքում և ստացել է Հարություն անունը։ Սովորել է Կամենեց-Պոդոլսկի գրպրոցում՝

Ի Կամենից քաղքում եմ սնեալ,
Ուսմանց գրոց աշակերտեալ.
Վարդան արքեպիսկոպոսին
Լէոպոլիյ առաջնորդին.
Անդ ի դպրատանն սրբոյ փափին
Իմաստուրեանց ուսայ ամս ինն[29]։

---

23 Հ. Զավարյան, Լեհահայոց գաղթը և ներքին կյանքը, «Հայրենիք», Բոստոն, 1929, մարտ, էջ 83։

24 Մ. Բժշկյան, նշվ. աշխ., էջ 161։

25 Sadok Barącz, նշվ. աշխ., էջ 156։

26 Wł. P. Górski, նշվ. աշխ., էջ 202։

27 Sadok Barącz, նշվ. աշխ., էջ 156—157։

28 Նույն տեղում, էջ 157։

29 Մ. Բժշկյան, նշվ. աշխ., էջ 162

Կամենեց-Պոդոլսկի դպրոցում նա կաթոլիկություն է ընդունում և Հարությունի փոխարեն ստանում Ավգուստինոս անունը, 1722 թ. քահանա է ձեռնադրվում և երեք տարի Կամենիցի Լուսավորչի եկեղեցում քահանայություն անելուց հետո մեկնում է Ժվանեց, հետո՝ Կուտի։ Տասներկու տարի այդ փոքրիկ հայկական քաղաքում հոգևոր հովվի պաշտոնը կատարելուց հետո (այդ ընթացքում նա Կուտիում հիմնադրել է եկեղեցի և երեք հոգևոր եղբայրություններ) մեկնում է Լվով, ապա չորս տարի անց գալիս Մոգիլյով-Պոդոլսկ։

Անտի թվին հազար նուն մէկի.
Մոհիլովայ քաղաքն եկի.
Զեկեղեցին նոր տէնկէցի,
Զկելուրն երկու քահանայի.
Եւ զբրավան հայոց ազգի
Ամս հինգ հոգետես տրքնեցի:
Հետոյ Ռաշքովն քաղաք գնացի,
Ըզսիրեալ հայազգն ժողովեցի[30]:

Երևում է, որ Ավգուստ քահանան Մոգիլյով է եկել 1742 թ. և այնտեղ մնացել է հինգ տարի. նրան փոխարինել է Շչեպան Քժիշտոֆովիչը (1748—1762 թթ.)[31]։

Բնական է, որ փայտաշեն և անշուք Գրիգոր Լուսավորչի եկեղեցին չէր կարող բավարարել Մոգիլյովահայերի օրեցօր մեծացող գաղութի պահանջները, ուստի նոր եկեղեցի կառուցելու անհրաժեշտություն է առաջանում։ Այդ գործը գլխավորում է Շչեպանին հաջորդած քսենձ Շիմոն Քժիշտոֆովիչը։ Ի դեպ, Մ. Բժշկյանը սխալմամբ այդ բանը վերագրել է ուրիշի։ Նա գրում է. «Այլ իբր 48. ամօք յառաջ շինեցաւ քարաշէն յիշխանէ նոյն ցեղին՝ միջնորդութեամբ Յովսեփայ Քրիստոֆորովիչ նախապատիւ կանոնիկոսին»[32]։ Վերջինս Մոգիլյովի ծխատեր քահանա է դարձել եկեղեցու հիմնադրումից 38 տարի հետո և նա ոչ թե եկեղեցու կառուցումն է կազմակերպել, այլ հիմնադիրն է եղել Մոգիլյով-Պոդոլսկի հայ եպիսկոպոսության։

Մոգիլյովի քարաշեն նոր եկեղեցու կառուցումը սկսվել է 1772 թ. մայիսի 21-ին և ավարտվել 19 տարի հետո՝ 1791 թ. մայիսի 24-ին։ Շինարարության համար ծախսվել էր 129568 զլոտի[33]։ Եկեղեցու հանդիսավոր օծումը տեղի է ունեցել նույն թվականի հունիսի 3-ին, այդ նպատակով Լվովից ժամանած արքեպիսկոպոս Հակոբ Վալերիան Թումանովիչի ձեռքով[34]։ Նոր եկեղեցին, որ կառուցված էր նախկինի տեղում, հետագայում հայտնի էր «Անարատ հղության Սբ. Աստվածածնի» անունով[35], բայց Ս. Բարոնչը գրում է, որ եկեղեցին կոչվել է „Swiętej Trojcy, Nawiedzenia Matki Najswiętszej i św. Grzegorza patriarchy"[36]։ Այսինքն «Սուրբ Երրորդության, Սուրբ Մոր այցելության և Գրիգոր պատրիարքի», սակայն հետագայում, ինչպես լեհահայ եկե-

30 Նույն տեղում, էջ 163։
31 Wł. P. Gorski, նշվ. աշխ., էջ 205։
32 Մ. Բժշկյան, նշվ. աշխ., էջ 161։
33 Sadok Baracz, նշվ. աշխ., էջ 161։
34 Նույն տեղում։
35 Պետրոս քահանա Մամիկոնյան, Ռումինահայոց ներկայն և ապագայն, Կալաց, 1895, էջ 22։
36 Sadok Baracz, նշվ. աշխ., էջ 161։

ղեցիների մեծ մասը, այնպես էլ այս կոստյոլը կոչվել է միայն Աստվածամոր անունով։

Մ. Բժշկյանը այսպես է նկարագրում Մոգիլյովի հայկական եկեղեցին. «է քարաշէն և պայծառ, չափաւոր մեծ՝ կառուցեալ ի միջավայրի անդ ժամանան յանուն անարատ յղութեան Աստուածածնին. ունի 5 խորանս. յաջակողմն աւագ խորանին եդեալ կայ հրաշագործ պատկեր Տիրամօրն ...ունի կրկին զանգակատունս և կրկին աւանդատունս, բայց աւագ խորանն անձև մնացեալ է»[37]։ Այդ երկու զանգակատների վրա, ճակատի կողմից փորագրված է եղել Պոտոցկիների զինանշանը, որոնք կրկին դրամական օգնություն էին ցույց տվել եկեղեցու կառուցմանը[38]։ Եկեղեցում եղել է երգեհոն, որը, հավանորեն, ձեռք է բերվել շինարարության ժամանակ։ Հոգևոր եղբայրություններին վերաբերող նյութերում տեղեկություններ կան երգեհոնահարին վճարելիք գումարների մասին[39]։ Երևում է, որ այդ ծախսերի մի մասը դրված է եղել եղբայրությունների վրա։ Ք. Քուչուկ-Հովհաննիսյանը, որը 1895 թ. եղել է Մոգիլյովում, եկեղեցում տեսել է 1718 թ. Ամստերդամում հրատարակված հետևյալ գիրքը՝ «Ներաժշտական երգեցմունք հոգևորականք Աստուածայնոց և երջանկաց սրբոց վարդապետաց Հայոց թարգմանչաց։ Ճկարգաւորութիւնս եկեղեցւոյ վայելչացուցանօղաց»[40]։ Մոգիլյովի եկեղեցում այդ գրքի առկայությունը հիմք է տալիս ասելու, որ այնտեղ երգեհոնի նվագակցությամբ կատարվել են հայկական շարականներ, քանի որ կաթոլիկություն ընդունելուց հետո էլ դեռ երկար ժամանակ լեհահայոց եկեղեցիներում բոլոր կարգի արարողությունները կատարվում էին հայերեն, մինչև ի վերջո մոռացվել է հայերենը և նրա տեղը գրավել է լատիներենը։

Ք. Քուչուկ-Հովհաննիսյանը այնտեղ տեսել է նաև «Տիրամոր սքանչելագործ արծաթապատ պատկերը մոտ մի կանգուն բարձրությամբ» և Գրիգոր Լուսավորչի ձեռքով Տրդատ թագավորի ու Աշխեն թագուհու մկրտությունը պատկերող նկար՝ հետևյալ հայերեն մակագրությամբ. «Զարշարանք Սրբոյն Գրիգորի Հայաստանեա(յ)ց Լուսաւորչի»։ Խորանում եղել է նույնատիպ մեկ այլ նկար, որի չորս բոլորը նկարված 16 շրջանակների մեջ պատկերված են եղել Գրիգոր Լուսավորչի և Հռիփսիմե կույսի չարչարանքները։ «Այս պատկերը,— ասում է Ք. Քուչուկ-Հովհաննիսյանը,— բավականին հին բան է և նրա վերանորոգման համար Մագիլեվի հայերը, ինչպես պատմեց ինձ իմ հայ ուղեկիցս, ծախսել են 160 ռուբլի»[41]։

Մոգիլյովի հայերն իրենց գերեզմանատանը կառուցել էին մի փոքրիկ մատուռ, ուր թաղված են եղել մի քանի նշանավոր հայեր։ Քուչուկ-Հովհաննիսյանը գրում է, որ նրանց գերեզմանաքարերի, ինչպես և ավելի նոր շիրմաքարերի վրա եղած արձանագրությունները լեհերեն էին[42]։ Բայց նրանից 33 տարի առաջ Մոգիլյովում եղած մի ռուս հոգևորական՝ Աֆանասև-Զուժբինսկին իր «Ճանապարհորդություն Դնեստր գետի վրայոք» վերնագրով ուղեգրական

---

37 Մ. Բ ժ շ կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 161։

38 W ł. P. G ó r s k i, նշվ. աշխ., էջ 203։

39 S t a n. K r z y ż a n o w s k i, նշվ. աշխ., էջ 26։

40 Մ. Շ ո վ ր յ ա ն, Հայության բեկորները Ռուսիայի հարավ-արևմտյան նահանգներում, «Արձագանք», 1895, № 151։

41 Նույն տեղում։

42 Նույն տեղում։

նոթերում, որոնք սկզբնապես լույս են տեսել «Մոսկոյ զբորնիկ» ամսագրի 1862 թ. փետրվարի հասարում և հետագայում թարգմանվել ու հրատարակվել «Մեղու Հայաստանի» լրագրում, նշում է, որ Մոգիլյովում ինքը տեսել է հայերեն արձանագրություն կրող տապանաքարեր։ «Մոգիլեվ քաղաքումը,— կարդում ենք նրա նոթերում,— դանա՝ ան ազգաց հետ միասին կացել են բազմաթիվ Հայք և սրա ապացույցը էն է, որ Լեհաց եկեղեցիքի դռներու առաջը շատ կոփածու քարեր կան հայերեն գրած տապանագրերով»[43]։ Լ. Մազիրյանցը գրում է, որ Մոգիլյովի եկեղեցու սալահատակը կազմված է հայերեն արձանագրություններ կրող գերեզմանաքարերից[44]։ Այդ նույն եկեղեցում հայերեն արձանագրություններ կրող տապանաքարեր է տեսել նաև Կատերինա Մելնիկը[45]։

1972 թ. ամռանը Մոգիլյով կատարած ուղևորության ժամանակ մեզ հայտնի դարձավ, որ «Անարատ հղության սուրբ Աստվածածնի» եկեղեցին, ուր գտնվելիս են եղել այդ տապանաքարերը, քանդվել է 1930-ական թթ., իսկ մատուռը՝ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո։ Այժմ քաղաքի լեհական կոչված գերեզմանատանը մնացել են մոգիլյովահայերի մի շարք տապանաքարեր՝ լեհերեն արձանագրություններով։

Անհրաժեշտ է նշել, որ հայերի կառուցած բազմաթիվ տների առկայությունը Մոգիլյովում ինչ որ չափով այդ քաղաքին տվել է արևելյան տեսք։ Աֆանասև-Չուժբինսկին այդ մասին գրում է. «Մոգիլյովը նման չէ կենտրոնական և հարավային նահանգների քաղաքներին, դա զուտ տեղական ստեղծագործություն է, որտեղ, սակայն, արևմտյան նահանգների տիպարն ինչ որ արևելյան բույր ունի և փակուղու առջև է կանգնեցնում նրա պատմությանն անտեղյակ դիտողին։ Իրականում Մոգիլյովում դուք կգտնեք նմանություն Կամենեց-Պոդոլսկի հետ, միևնույն ժամանակ որևէ տան ճարտարապետություն ձեզ կհիշեցնի Թիֆլիսը կամ ավելի շուտ Երևանը, հասկանալի է հեռվից, որովհետև մոտիկից հեռավոր այդ նմանությունը Արևելքի հետ ձեր մտքովն անգամ չի անցնի»[46]։ Աֆանասև-Չուժբինսկին մինչև Մոգիլյով գալը ճանապարհորդել էր Արևելքում, եղել էր նաև Վրաստանում և Հայաստանում, ուստի, անտարակույս, ուշադրության արժանի է Մոգիլյովի հայերի կառուցած տների և Թիֆլիսի ու հատկապես Երևանի տների միջև նրա նկատած այդ նմանությունը։

Համարյա նույն բանն է պնդում նաև Աֆանասև-Չուժբինսկուց շուրջ քառորդ դար հետո Մոգիլյով այցելած ուկրաինական պատմաբան Կատերինա Մելնիկը. «Ընդհանրապես Մոգիլյովը շատ է հիշեցնում Կամենիցը,— գրում է նա,— և այդ նմանությունը ավելի է մեծացնում ճարտարապետության մեջ առկա արևելյան երանգը՝ այստեղ հայ գաղթականների երկարատև գոյության վերջին հետքը։ Նույն հին քարե տներն են՝ արտակարգ հաստ պատերով, երկար պատշգամբներով, կիսավերնահարկերով և ցածրիկ, յուրօրինակ տանիքով։ Շատ բարձր, քարից պատրաստված պարիսպը՝ վերևից զարդարված սրածայր ծածկով, որը գրեթե մեկ արշին բարձրանում է երկու կողմից, այնպես

43 «Մոգիլեվյան հայք», թարգմ. Ս. Պատկանյանց, «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1862, 9 հունիսի, № 23, էջ 90։

44 Լ. Մազիրյանց, Հայոց մեծ գաղթականությունը ԺԸ դարում և նորա վիճակը Լեհաստանում, էջ 135։

45 К. М., Путевые очерки Подолия, էջ 162։

46 А. Афанасьев-Чужбинский, Поездка в Южную Россию, часть II, Очерки Днестра, Санкт Петербург, 1863, էջ 211։

որ առանց հատուկ հարմարությունների հնարավոր չէ վեր ելնել նրա վրա, փակում է համարյա ամեն ինչ, նույնիսկ քաղաքից դուրս եղած տներն ու այգիները։ Այսպիսով, յուրաքանչյուր բնակարան բոլորովին մեկուսացված է թե՛ փողոցից, թե՛ հարևաններից՝ ներկայացնելով փոքրիկ ամրոցի նման մի բան, որ կարելի է տեսնել Ղրիմում և Կովկասում»[47]։

Ինչպես երևում է, Մոգիլյովի հայ գաղութում հայոց լեզուն բավական տարածված է եղել, այդ պատճառով այնտեղի ծննդյան, պսակի ու մեռելոց մատյանների մեջ գրանցումները 1743 թ. մինչև 1826 թ. կատարվել են հայերեն։ Քուչուկ-Հովհաննիսյանը ծանոթացել է այդ մատյաններին և նրանցից մի քանի նմուշ հրատարակել ուղեգրական իր նոթերի մեջ։

Արդ, ի՞նչ նշանավոր հայեր են ապրել Մոգիլյովում և ի՞նչ է մեզ հայտնի նրանց գործերի մասին։

Մոգիլյով-Պոդոլսկի հայերի մեջ Ավգսենտ վարդապետից հետո նշանավոր դեմքերից էր քսենձ Շիմոն Քժիշտոֆովիչը։ Նա ծնվել է Լիսեց գյուղում 1729 թ., ավարտել է Լվովի պապական դպրոցը և որոշ ժամանակ Կամենեց-Պոդոլսկում կանոնիկոս լինելուց հետո, դարձել է Մոգիլյովի հայոց դեկանը և պրոպոշը[13] (ծխական քահանան)։ Եռանդուն այդ հոգևորականը մեծ աշխատանք է տարել հայերին Մոգիլյովում հավաքելու, նրանց շահերը պաշտպանելու ուղղությամբ։ Մոգիլյովահայերի իրավունքներն ապահովող մի շարք միջոցառումներ իրականացնելուց և հայկական նոր կոստյուլի շինարարությունն ավարտելուց հետո, Շիմոն Քժիշտոֆովիչը ձեռնամուխ է լինում նաև գրական աշխատանքի։ Նրա գրչին է պատկանում լատիներեն մի արժեքավոր աշխատություն („Status et muhimenta Ecclesiae Armenae Mohyloviensis sub titulo S. Gregorii Patriarchi. A. Illuminatoris Armenorum ad perpetuam"), որի մեջ տրված է Մոգիլյովի եկեղեցու և մասամբ նաև այդ քաղաքի հայ գաղութի 35 տարվա (1763 թ. հունվարից մինչև 1808 թ. օգոստոս) պատմությունը։ Այդ աշխատությունից օգտվել է լեհ գիտնական Ստանիսլավ Կժիժանովսկին իր «Silva Rerum» և «Kosciol N. Maryi Panny» աշխատությունները շարադրելիս[49]։

Քժիշտոֆովիչի աշխատության ձեռագիրը պահվելիս է եղել Մոգիլյովի եկեղեցու արխիվում, այժմ նրա մասին մեզ ոչինչ հայտնի չէ։ Շ. Քժիշտոֆովիչը մահացել է Մոգիլյովում 1810 թ. և թաղվել իր կառուցած եկեղեցում։

Շիմոն Քժիշտոֆովիչի «Status»-ի շնորհիվ տեղեկություններ են պահպանվել Յան Քժիշտոֆովիչ Սեթովի մասին, որն ինչպես նշել ենք, եղել է Մոգիլյովի առաջին հայ վոյթը։ Մեծահարուստ այս վաճառականը նյութական օգնություն է ցույց տվել եկեղեցու կառուցմանը և միաժամանակ իր եռանդուն մասնակցությունը բերել շինարարությունը կազմակերպելու և ավարտի հասցնելու գործին։ Շ. Քժիշտոֆովիչի վկայությամբ Յան Քժիշտոֆովիչը եղել է շատ ազնիվ և արդարամիտ մարդ։ Այնքան մեծ էր նրա ազդեցությունը և հեղինակությունը քաղաքում, որ իշխան Պոտոցկին նրան է վստահել ողջ Մոգիլյովի կառավարման գործը[50]։

Մոգիլյովում ապրած և գործած հայերի մեջ ամենաաչքի ընկնող անձնա-

---

[47] К. М., Путевые очерки Подолия, էջ 143։

[48] Dr. Antoni J, Zameczki Podolskie na kresach multańskich, t. III, Warszawa 1880, էջ 224։

[49] Wł. P. Gorski, նշվ. աշխ., էջ 205։

[50] Stan. Krzyżanowski, նշվ. աշխ., էջ 14։

վորությունն, անտարակույս, եղել է Ռափայել Ուզունյանը (Երկանյանը)։ Մխիթարյան այդ հոգևորականը (ծնվել է Կ. Պոլսում 1800 թ.) իր կրթությունը Վիեննայում ստանալուց և քահանա դառնալուց (1818 թ.) մեկ տասնամյակ անց գալիս է Մոգիլյով և շուրջ քառորդ դար քահանայագործում այնտեղի հայկական կոստյոլում՝ միաժամանակ զբաղվելով գրական-թարգմանչական արդյունավետ աշխատանքով։ Քաջ տիրապետելով լատիներեն, հունարեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն և լեհերեն լեզուներին, նա հայերեն է թարգմանել այդ լեզուներով գրված գլխավորապես դասական հեղինակների թե՛ արձակ, և թե՛ չափածո ու դրամատիկական բաղմաթիվ ստեղծագործություններ։ Նրա թարգմանական առաջին փորձը, որը լույս ընծայվեց Վիեննայում 1825 թ., աշխարհաբար էր[51], բայց հետագայում նա մեծ մասամբ թարգմանում էր գրաբար։

Մոգիլյով գալով, Ռ. Ուզունյանը ձեռնամուխ է լինում նոր թարգմանությունների. 1848 թ. նա սկսում է Հոմերոսի «Իլիականի» հայերեն թարգմանության գործը և հաջողությամբ ավարտի հասցնում։ Ուշագրավ այդ թարգմանության ձեռագիրն այժմ պահվում է Վիեննայի Մխիթարյանների մատենադարանում[52]։ Թարգմանությանը կցված հակիրճ առաջաբանից («Տեղեկութիւն զվարուց և զգրոց Հոմերոսի») երևում է, թե պատասխանատվության ինչպիսի բարձր զգացումով է մոտեցել Ռ. Ուզունյանը այդ կարևոր գործին։ «Իլիականի» հայերեն առաջին թարգմանությունը, ինչպես հայտնի է, եղիա Թովմաճյանինն էր (հրատ. Վենետիկում՝ 1843 թ.)։ Ուզունյանը ծանոթ էր այդ թարգմանությանը, նա համեմատել էր այն բնագրի հետ ու չէր հավանել «Ոչ հանգուցանէին զսիրտ իմ ի բաղդատել անդ ընդ բնագրին» և որոշում է ինքը ևս թարգմանել այդ գործը՝ «Ջանացայ զբնիկ լեզու մեր չաղաւաղել և ոչինչ ընդդէմ կանոնաց ոտանաւորի լեզուիս գործել... յաւելեալ եմ սուղ ծանօթութիւնս յանձնիւր Հագներգութիւնս քաղելով համառօտիւ զհետևողութիւնս մեծամեծ քերթողաց»[53]։ Անհրաժեշտ է նշել, որ Ուզունյանի այս թարգմանությունը, որի մասին դեռևս 1911 թ. գրված է Վիեննայի Մխիթարյան միաբանության գրական գործունեությանը նվիրված ակնարկում[54], վրիպել է «Իլիականի» հայերեն նոր թարգմանության առաջարանի հեղինակ, պրոֆ. Ա. Առաքելյանի ուշադրությունից։ Նա նշում է նախասովետական շրջանում կատարված երեք թարգմանություններ (Ե. Թովմաճյանի, հրատ. 1843 թ., Ա. Բագրատունու, հրատ. 1864 և 1893, Ա. Ղազիկյանի, հրատ. 1911 թ.), մինչդեռ տեսնում ենք, որ ժամանակագրական առումով Ուզունյանի թարգմանությունը երկրորդն է Թովմաճյանի գործից հետո։ Հետևապես մինչև պրոֆ. Հ. Համբարձումյանի թարգմանությունը

---

51 «Հոմոսիգնողեան Կարոյոս Գրիգոր (Յիսուսեան կրօնաւոր). Հոգեշահ մտածութիւնք աստուածային բանից»։ Թարգմանեալ ի լեզու աշխարհաբար ի դիւրութիւն և յօգուտ բարեսէր հաւատացելոց ի Հ. Ռափայելէ Ուզունեան, Վիեննա, 1825։

52 «Հոմերոսի Եղիական ի հելլենական բնագրէ համեմատութեամբ թարգմանութեանց այլ և այլ ազգաց փոխեցաւ ի հայս, որում պիտանի էր յոյժ ի Մոյիլով քաղաքի կուսակալութեան Բոտոլիոյ մերձ ի գետն անուանեալ Տնեստեր, որոյ վաղեմի անուն Թիրաս. Ա—ԺԲ. Սկսեալ 1848 ՈՄՂԷ» (տես «Ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա», հատ. Բ, կազմեց Հ. Համազասպ Ոսկեան, Վիեննա, 1963, էջ 813)։

53 Նույն տեղում, էջ 803։

54 «Ակնարկ մը Վիեննական Մխիթարյան միաբանության գրական գործունեության վրա» (1811—1911), «Հուշարձան գրական ժողովածո առթիվ 100 ամյա հոբիլինի հաստատման Մխիթարյան միաբանության ի Վիեննա (1811—1911)», Վիեննա, 1911, էջ 26։

(1955 թ.)[55] գոյություն է ունեցել «Իլիականի» ոչ թե երեք, այլ չորս թարգմանություն։ Դժբախտաբար Ուզունյանի թարգմանությունը չի հրատարակվել և մնացել է ձեռագիր վիճակում։

Հեռավոր Մոգիլյովում ապրող այդ հայ մտավորականը ձգտել է մայրենի գրականությունը հարստացնել համաշխարհային մշակույթի գոհարների նորանոր թարգմանություններով։ Նրա այդ գեղեցիկ մտահղացման մասին են վկայում լատիներեն, գերմաներեն, ֆրանսերեն և այլ լեզուներից կատարած տասնյակ թարգմանությունները։ Լատիներեն բնագրից նա հայերեն է թարգմանել մ. թ. ա. I դարում ապրած հռոմեացի նշանավոր բանաստեղծ Վիրգիլիոսի «Էնեական» պոեմը։ Այդ նույն տարիներին «Էնեականը» հայերենի էր վերածել մեկ այլ թարգմանիչ[56]։ Ուզունյանը թարգմանում է նաև Եզովպոսի առակները (չափածո), Վոլտերի «Հենրիականը», Լեսսինգի, Փիլոտասի ողբերգությունները և այլն։ Մոգիլյովում նա իրականացրել է երկու տասնյակից ավելի թարգմանություններ։ Դրանց մեջ, անշուշտ, մեծ արժեք ունեն դասական գրողներից կատարածները։ Ուզունյանը «ունի նաև,— գրում է Ն. Ակինյանը,— թատերական հատվածներ՝ Մոլիերեն (մասամբ լեհահայոց բարբառով)»[57], այսինքն այն բարբառով, որով խոսում էին Մոգիլյովի հայերը։ Մոլիերի գործերի թեկուզ և քաղվածաբար թարգմանությունը, այն էլ Մոգիլյովի հայերի առօրյա-խոսակցական լեզվով, ըստ երևույթին հետապնդել է գործնական նպատակ։ Ուզունյանը, հավանորեն, մտադիր է եղել նպաստել նրանց բեմականացմանը, բայց այդ մասին մեր ունեցած նյութերը, ցավոք, ամենևին պերճախոս չեն։ Ամեն պարագային, լեհահայոց բարբառով կատարված թարգմանությունը ուշագրավ երևույթ է, այն կարող է նպաստել այդ բարբառի հետագա ուսումնասիրման գործին։ Առավել ևս, որ Մոգիլյովի հայերի խոսակցական լեզվով գրառումներ չեն պահպանվել և այդ թարգմանությունները մոռացված այդ խոսվածքի համար եզակի նմուշներ են։

Ուզունյանը թարգմանություն է կատարել նաև Շիլլերի արձակից («Պատմութիւն խռովութեանց Գաղղիոյ»), որը նույնպես ձեռագիր է և պահվում է Վիեննա ում, ինչպես նաև լեհերենից (Իգնատիոս Գրավիցկու «Խոսակցութիւնք մեռելոցը», 1840 թ.)։ Նա պատրաստել է հայերենի առձեռն բառարան։ «Բաց ասկից,— գրում է Ն. Ակինյանը,— [Ուզունյանը] ունի բազմաթիվ թարգմանություններ կրոնական բնարերդության իտալացի, գաղղիացի կամ լեհ հեղինակաց, և աստվածաբանական գրվածոց... Թարգմանության ժամանակ,— շարունակում է Ակինյանը,— յուր ոճը շատ բարեխիղճ է, մանավանդ դասականաց թարգմանության մեջ, երբ իմաստին լավագույն ըմբռնման համար ունեցած է աչաց առջև երկուվերեք և երբեմն չորս-հինգ լեզվավ թարգմանություններ։ ...Լեզուն սեթևեթյալ չէ, շատ կանոնավոր սահուն և ճաշակավոր, թեև ոչ ոսկեդարյան հայերենի հետևող»[58]։ Ն. Ակինյանը ցավով նշում է, որ

---

55 Հոմերոս, Իլիական, հին հունարեն բնագրից թարգմանեց՝ Համազասպ Համբարձումյան, Երևան, 1955, էջ 32։

56 Պորֆիրոսի Վիրգիլեայ Մարոնի Ենէականին թարգմանութիւն ի ձեռն Հ. Եգուարդայ վ. Հիրմուզեան ի Մխիթարեան ուխտէն ի խրախուսանաց ազնուազարմ պարոնի Աբրահամու Աղանուրեանց, Վենետիկ, 1845։

57 «Ակնարկ մը Վիեննական Մխիթարյան միաբանության գրական գործունեության վրա», էջ 26։

58 Նույն տեղում, էջ 27—28։

Ուզունյանի մեծաթիվ աշխատությունները «ժամանակի բերմամբ մնացած են անտիպ՝ զարդ մեր Մատենադարանի»[59]։

Մոգիլյովում շուրջ քառորդ դար մնալուց հետո Ռ. Ուզունյանը մեկնում է Պոդոլյան գավառի մեկ այլ հայաշատ քաղաք՝ «Յամի 1853 ի 20 մայ[իսի] ըստ հ[ին] տ[ոմարի] հասի ի Ռաշքով բնակել իբրև ժողովրդապետ այսր եկեղեցւոյ»[60]։ Այստեղ 1854 թ. մայիսի 14-ին ավարտում է «Նիկողայոսի Աւանկինեայ վարք և վարդապետութիւն Յիսուսի Քրիստոսի» աշխատության թարգմանությունը[61]։ Երեք տարի հետո՝ 1856 թ. մարտի 16-ին, նա մեկնում է Կամենեց-Պոդոլսկ, ստանձնում հայկական եկեղեցու քահանայի կամ, ինչպես ինքն է գրում, ժողովրդապետի պաշտոնը։ Այստեղ էլ նա վախճանվում է 1863 թ.[62]։ Նրա հարուստ արխիվը տեղափոխվում է Վիեննա և այժմ գտնվում է Մխիթարյանների մատենադարանում[63]։

Ռափայել Ուզունյանի թողած ձեռագրերի թիվը հասնում է 47-ի, որոնցից մոտավորապես 30-ը նա գրել է Մոգիլյովում։ Զարմանալի է, թե ինչպես առանց նյութական որևէ ակնկալության և չսպասելով իր գործերի հրատարակությանը, մեկը մյուսի ետևից նա կարողացել է իրականացնել տարբեր լեզուներով գրված տասնյակ մեծածավալ ստեղծագործությունների թարգմանություններ, որոնց էջերի ընդհանուր քանակը հասնում է 25 000-ի։ Եվ այդ ամենը ինամքով արտագրելով «ամենամաքուր նոտագրով խիտ առ խիտ տողված»[64], նա կարծես հիշատակ է թողել սերունդներին իր բացառիկ աշխատասիրության և գրական ընտիր ճաշակի մասին։ Հայրենի գրականության զարգացմանը ծառայելու նրա ձգտումները, ցավոք, կիսատ մնացին, տարիների վիթխարի աշխատանք կլանած նրա թարգմանությունները չհրատարակվեցին և չհասան ընթերցողներին։ Այդուհանդերձ, շնորհալի թարգմանչի, գրչի այդ անխոնջ մշակի վաստակաշատ կյանքն ու ստեղծագործությունը արժանի են մասնավոր ուշադրության և հատուկ ուսումնասիրության։

Դնեստր նավարկելի գետը, որն ամեն տեսակետից նպաստում էր Մոգիլյովի զարգացմանը, երբեմն նաև մեծամեծ վնասներ էր հասցնում քաղաքին։ Վարարումների ժամանակ գետը դուրս էր գալիս ափերից, ավերում ու իր հետ տանում ոչ միայն առափնյա վայրերի, այլև քաղաքի կենտրոնի շինությունները։ Այդպիսի մի ուժեղ ջրհեղեղի ժամանակ, 1784 թ., Դնեստրի ալիքներին կուլ են գնում մոգիլյովցիների շատ տներ, խանութներ ու պահեստներ[65]։ Բնական աղետի պատճառած չարիքն այնքան մեծ էր, որ Մոգիլյովում հաստատված օտարերկրացի բազմաթիվ առևտրականներ ստիպված են լինում ընդմիշտ հեռանալ քաղաքից։ Ի թիվս սնանկացած վաճառականների քաղաքից մեկնում են նաև շատ հայեր։ Դա առաջին, շոշափելի հարվածն էր, որ ստացավ Մոգիլյովի մինչ այդ բարգավաճող հայ գաղութը։ Այնուհետև քաղաքական իրադարձությունները նպաստավոր չեղան գաղութի հետագա զարգացման համար։

---

59 Նույն տեղում, էջ 26։

60 Հ ա մ ա զ ա ս պ Ո ս կ յ ա ն, Յուցակ հայերէն ձեռագրաց, էջ 825։

61 Նույն տեղում, էջ 828—829։

62 Michel Rolle, Z życia ormian Kamienieckich w XVII i XVIII wieku, 1891, էջ 1։

63 Հ ա մ ա զ ա ս պ Ո ս կ յ ա ն, Յուցակ..., ձեռ. №№ 1136—1151, 1154—1184։

64 «Ակնարկ մը...», էջ 26։

65 „Історія міст і сіл Української РСР, Вінницька область", Київ, 1972, էջ 415։

Տարանցիկ առևտրի կարևոր հանգուցակետում գտնվող սահմանամերձ այդ քաղաքը միմյանց արագորեն հաջորդող պատերազմների, արշավանքների և, վերջապես, Լեհաստանի երկրորդ բաժանման հետևանքով ինչ-որ չափով կորցրել էր առևտրի ասպարեզում իր ունեցած ակտիվ դերը և, ի վերջո, վեր էր ածվել Պոդոլյան նահանգի գավառային խուլ մի քաղաքի, որի տնտեսության բուռն զարգացումը դեռևս լինելու էր ավելի ուշ ժամանակներում։ Այդ ամենը, բնականաբար, չէր կարող բացասական ազդեցություն չունենալ նաև այլ վայրերից ստացվող հումքի մշակմամբ զբաղվող հայ արհեստավորների, հատկապես կաշեգործների, տնտեսական ընդհանուր վիճակի վրա, որոնց եկամուտները կախված էին նաև առևտրի ծավալման, ինչպես և տեղում ու հարևան վայրերում պարբերաբար կազմակերպվող տոնավաճառներին ակտիվորեն մասնակցություն ցույց տալու հետ։ Բացի այդ, կարմիր կաշվից կարված կոշիկները այլևս մոդայիկ չէին, իսկ ամենևին դյուրին չէր դիմանալ սև կաշվի արտադրությամբ զբաղվող այլազգի արհեստավորների գնալով ծավալվող մրցակցությանը։ Ուստի Մոգիլյովի հայ արհեստավորները կանգնում են տնտեսական դժվարությունների առջև։

Ծանր կացություն է ստեղծվում նաև առևտրականների համար։ Աֆանասև-Զուժբինսկին խոսելով այդ մասին, նախ և առաջ նշում է ապրանքները մաքսատներով անցկացնելիս ծագած բարդությունների և այն մասին, որ հայերի համար խոչընդոտ է հանդիսացել ոչ միայն ռուսերենին չտիրապետելը, այլև նոր սակացույցներին անծանոթ լինելը. «վասն որո և գների բարձրանալովը նրանք դժվարությամբ էին ծախում իրենց ապրանքները»[66]։ Դրանից բացի, արդեն լուրջ մոցակիցներ էին դարձել հրեաները, որոնց մինչ այդ արգելվում էր բնակություն հաստատել խոշոր քաղաքներում։ Հրեաները Կամենիցից մեկնում էին Մոլդավիա և մեծ քանակությամբ ապրանք բերում «ըստ ամենայնի նման տաճկաց ապրանքին» և վաճառում ավելի ցածր գներով։ Երևան են գալիս նաև մաքսանենգային ճանապարհներով բերված և, բնականաբար, ավելի էժան գնով վաճառվող ապրանքներ։ Այս ամենին գումարվում են նույնպես «գիլդիական հարկը», «գանձարանին հատուցանելիք տոկոսները» և այլն։ «Երբ որ հաշվում ենք էս բոլոր ծախսերը, մաքսերը և ընծաները, որք հավասարվում են ապրանքի դնին, էն ժամանակը հեշտ է լինում հասկանալ, թե հայերը ոչ միայն ստիպյալ կլինեին թողնել իրանց առևտրական պարապմունքը, այլև բոլոր դրամագլուխները կորցնելով, ինքներն էլ կաղքատանային»[67]։

Հասկանալի է, որ ամենից ավելի տուժում էր բնակչության ընչազուրկ խավը, առևտրականների և վարպետների մոտ օրավարձով աշխատող մանր ծառայողները, որոնք հարկադրված էին ամեն օր լուծել ապրուստի միջոցներ ձեռք բերելու գնալով դժվարացող խնդիրը։ Սնանկացած և տնտեսական քայքայման եզրին հասած առևտրականներն ու արհեստավորները հեռանում էին այլ վայրեր, իսկ դրամական պատշաճ հնարավորություններով օժտված նրանց համաքաղաքացիները կալվածքներ էին ձեռք բերում և հաստատվում գյուղերում։ Ամեն դեպքում գաղութը դառնում էր սակավամարդ և գնալով կորցնում իր ազգային դեմքը։

---

66 «Մոգիլևյան հայք», էջ 90։
67 Նույն տեղում։

Մոգիլյովի գաղութի համար ծանր վիճակ ստեղծվեց նաև 1808 թ., երբ քաղաքում բռնկված մեծ հրդեհին ճարակ դարձան Մոգիլյովի բերդն ու քաղաքի շատ թաղամասեր։ Այրվեցին նաև հայերի առևտրական տները[68]։ Քաղաքն այդ ժամանակ արդեն դադարել էր Պոտոցկիների սեփականությունը լինելուց։ Ստանիսլավա Շչենսնի Պոտոցկայայի մահից հետո, 1806 թ., նրա ավագ որդին՝ Շչենսնի Եժին, քաղաքը 587 220 ռուբլով վաճառել էր ռուսական պետությանը[69]։

Մինչ այդ Մոգիլյովի, ինչպես և ողջ Պոդոլյեի հայերը հոգևոր գործերում ենթարկվում էին Լվովի հայ արքեպիսկոպոսին, բայց ռուսական իշխանությունները չէին կարող հանդուրժել այդ բանը։ «Ոչ հաճէր պետութիւնն Ռուսաց,— գրում է Կ. Եղյանը,— զի արք հպատակք իւր՝ Հովուեսցին ըստ հոգևորին յիշխանաւորաց արտաքոյ սահմանաց իւրոց բնակելոց»[70]։ Ուստի և Ռուսական կայսրության լուսավորության մինիստր Գոլիցինի եռանդուն միջամտությամբ Մոգիլյովի հայ կանոնիկոս Հովսեփ Քժիշտոֆովիչը, որը հրավիրվել էր Պետերբուրգ, նշանակվում է եպիսկոպոս և նրա հոգևոր իշխանության տակ են անցնում Ռուսաստանի բոլոր հայ-կաթոլիկ եկեղեցիները։

Մոգիլյովում հայ եպիսկոպոսության հիմնադրման ժամանակը հեղինակների մոտ տարբեր ձևով է նշված[71]։ Ավելի հավաստի է այս հարցում Վ. Պ. Գուրսկին. նա գրում է, որ Հ. Քժիշտոֆովիչը եպիսկոպոս է նշանակվել 1806 թ. դեկտեմբերի 4-ին, 1809 թ. հաստատվել է Հռոմում և մեկ տարի անց՝ 1810 թ. հունիսի 11-ին օծվել Լվովում՝ Սիմոնովիչ արքեպիսկոպոսի ձեռքով[72]։

Մոգիլյովում հայկական կաթոլիկ եպիսկոպոսության հաստատվելը ձևակերպվել է նաև ռուսական սենատի կողմից, որին այդ կապակցությամբ 1810 թ. նոյեմբերի 7-ին ցարը տվել է ինքնաստորագիր հրաման։ Վերջինիս համառոտագրությունը, քաղված սենատի տեղեկագրերում հրապարակված օրենքներից, լույս է ընծայված Մոսկվայում 1833 թ.[73]։

Նորաստեղծ եպիսկոպոսությունը հարուստ չէր, Մոգիլյովի մոտ եղած Քժիշտոֆովկա խուտորից բացի, որտեղ ապրում էին ընդամենը 18 գյուղացիներ, այն ուրիշ կալվածք չուներ[74]։ Մեծ չէր նաև հոգևորականների թիվը, եպիսկոպոսից բացի այնտեղ կային վեց կանոնիկոսներ[75]։

---

68 Е. Сецинский, Исторические местности Подолии и их достопримечательности, Каменец-Подольск, 1911, էջ 16։

69 W ł. P. Górski. նշվ. աշխ., էջ 209։

70 «Բոնի միութիւն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռովմայ», Ս. Պետերբուրգ, 1884, էջ Լթ։

71 Մ. Բժշկյանը գրում է 1809 թ. («Ճանապարհորդութիւն...», էջ 161), Կ. Եղյանը նշում է, որ 1806 թ. Հովսեփը դարձել է Կամենիցի եպիսկոպոսի փոխանորդ, իսկ Մոգիլյովում հաստատվել է 1812 թ. («Բոնի միութիւն...», էջ Լթ—խ)։ Ք. Քուչուկ-Հովհաննիսյանը ցույց է տալիս 1809 թ. («Հայության բնկորները...», «Արձագանք», 1895, № 151)

72 W ł. P. Górski, նշվ. աշխ., էջ 204—205։

73 Տե՛ս «Именной указ Сенату. О бытии Армяно-католическому Епископу Криштофовичу Эпархиальным Епископом всех в России живущих Армян Римско-Католического Исповедания», «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа», часть I, М., 1833, էջ 38։

74 Приходы и церкви Подольской епархии, «Труды Подольского епархиального историко-статистического комитета», выпуск девятый, Каменец-Подольск, 1901, էջ 685։

75 «Մասեաց աղաւնի աւետաբեր Հայաստանեայց», Թեոդոսիա, 1863, 1 հոկտեմբերի, էջ 297։

Հովսեփ Քժիշտոֆովիչը (1762—1816 թթ.) վեց տարի է գլխավորել Ռուսաստանի հայ-կաթոլիկ թեմը։ 1814 թ. նա կարողանում է ավարտի հասցնել Մոգիլյովի եպիսկոպոսարանի շենքի շինարարությունը, որը մի քանի տարի հետո մեծ տպավորություն է թողնում այդ քաղաքն այցելած Մինաս Բժշկյանի վրա։ «Նոյնպէս երևելի է,— գրում է նա,— եպիսկոպոսարանն Հայոց քարաշէն և սիւնազարդ՝ բարձր և գեղեցկադիր շինեալ ի նոյն Յովսէփ եպիսկոպոսէ յամի տեառն 1814. յարևմտեան կողմն վանատան ի վերայ Տնեսդէր գետոյ, առ որով են և երկու բնակարանք ժողովրդապետաց յերկոսին կողմանս եկեղեցւոյն»[76]։ Այնուհետև Բժշկյանը գրում է, որ Հովսեփ Քժիշտոֆովիչը լայն ծրագրեր ուներ իր թեմի վիճակը բարելավելու համար, սակայն մահը խանգարեց նրա մտահղացումների իրականացմանը. «Եթէ չէր ժամանեալ տարաժամ մահ՝ լայնախորհուրդ եպիսկոպոսին, ոչ միայն զարդարելոց էր զեկեղեցի և զհայրապետանոց իւր, այլև զբոլոր վիճակն և զժողովուրդն, ըստ որում տենչայր ազգասէրն այն՝ և յետ սակաւուց ունէր բարձրանալ ի վիճակ արքեպիսկոպոսութեան՝ այլ յամի 1816, թողեալ զանցաւորս՝ էանց յանանց վիճակ զորոյ դամբարան գեղեցիկ մարմարիոնեայ տեսաք յոտս աջակողմեան խորանին»[77]։

Մոգիլյովի առաջին հայ եպիսկոպոսի գործունեությունից շատ բան մեզ հայտնի չէ։ Հ. Տեր-Աբրահամյանի Ղրիմի հայությանը նվիրված գրքից տեղեկանում ենք, որ 1815 թ. օգոստոսի կեսերին Հովսեփ եպիսկոպոսն օծել է Ղարասուբազարի նորակառույց հայ-կաթոլիկ եկեղեցին[78]։

Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային բաժնի կաթողիկոսական դիվանում պահպանվել է Քժիշտոֆովիչ եպիսկոպոսի մի նամակը՝ ուղղված Ղրիմի հայոց հոգևոր առաջնորդ Մանուել վարդապետին։ Այդ նամակից երևում է, որ Հովսեփ Քժիշտոֆովիչը քաջ տիրապետել է հայերենին։ 1816 թ. հունվարի 25-ին աշխարհաբար գրված այդ նամակով նա նոր տարվա շնորհավորանքներ է հղում Մանուել վարդապետին և հայտնում, որ «վասն մեծ տրկարութեանս հրնար չէղաւ» «խաչվանքը հանդրպելու»։ Նա հույս է հայտնում վարդապետի հետ տեսակցություն ունենալու կամ Ղարասուբազարում կամ էլ Գրիգորիոպոլում[79]։ Բայց այդ հանդիպումը չի կայացել Հովսեփ եպիսկոպոսի մահվան պատճառով։ Նա մահացել է նամակը գրելուց երեք օր հետո՝ հունվարի 28-ին։ Նրան թաղել են Մոգիլյովի հայկական եկեղեցում և մարմարե տապանաքարի վրա թողել լեհերեն հետևյալ արձանագրությունը՝ «Աստ հանգչի Ռուսաստանի հայ կաթոլիկների առաջին եպիսկոպոս, Ս. Աննայի առաջին կարգի շքանշանի կավալեր Յուզեֆ Քժիշտոֆովիչի մարմինը, որն ապրեց 54 տարի. մահացավ 1816 թ. հունվարի 28-ին»[80]։

Հովսեփ Քժիշտոֆովիչի մահից հետո Մոգիլյովի «թեմի կառավարությունը հանձնվեցավ գլխավոր հաջորդներ կոչված կառավարիչներին»[81]։ Այդ «կառա-

76 Մինաս Բժշկյան, նշվ. աշխ., էջ 161։

77 Նույն տեղում, էջ 161—162։

78 Հովհաննես Տեր-Աբրահամյան, Պատմութիւն Խրիմու հանդերձ աշխարհագրական և ուսումնական տեղեկութեամբք զնախնի և զայժմու բնակչաց Տաւրիոյ, Թեոդոսիա, մասն երկրորդ, 1865, էջ 178։

79 Մաշտոցի անվ. Մատենադարան, Արխիվային բաժին, կաթողիկոսական դիվան, թղթ. 29, վավ. 5։

80 Wł. P. Górski, նշվ. աշխ., էջ 203։

81 Պ. Ռ., Ուր են Լեհաստանցի հայերը, «Մեղու Հայաստանի», 1874, 16 նոյեմբերի, № 46, էջ 2։

վարիչներից» առաջինը եղել է եպիսկոպոս Անտոն Վարդերեսովիչը (1816—1822 թթ.), նրան հաջորդում է Սամուել Մոշորոն (1822—1854 թթ.)։ Ի միջի այլոց, Սամուել Մոշորոյին, որին անվանում էին նաև Նիկոլայ Մոշորո, ռուսական Նիկոլայ I թագավորը ցանկություն է ունեցել իր աթոռով տեղափոխել Թիֆլիս, բայց այդ ծրագիրը հավանության չի արժանացել[82]։ Մոշորոյի մահից հետո Մոգիլյովի հայ եպիսկոպոսությունը մեկ տարի ղեկավարել է Ռափայել Ուզունյանը[83], որից հետո, ինչպես նշված է Պոդոլյեի հայերին նվիրված մի հոդվածում, «զօրութեամբ Ռուսաց տէրութեան և Հռովմայ պապին մէջ եղած դաշնադրութեանը, Փոտոլիոյ կաթոլիկ Հայոց եկեղեցիները Կամենիցու լեհաց եպիսկոպոսին անմիջական իշխանութեան տակն ընկան»[84]։

Գաղութի քայքայումը շարունակվում էր. դեռևս 1820 թ. շատ հույն և հայ վաճառականներ սնանկանալու պատճառով հեռացել էին Մոգիլյովից. նրանց տեղը գրավել էին հրեաները[85]։ 1848 թ. ամռանը Մոգիլյովում սկսվում է խոլերայի համաճարակ, որը շատ զոհեր է խլում քաղաքից։ Ռ. Ուզունյանը Մոգիլյովում գրած իր գրքերից մեկի հիշատակարանում քաղաքի պատմության համար ուշագրավ այդ իրողության մասին գրել է հետևյալը. «1848 ի Յունիս 20 ըստ հ[ին] տ[ոմարի] սկսաւ աստ ի Մոյիլով քաղաքի, յորում բնակիմ, սոսկալի ախտն անուանեալ choléra, յորում բաղումք մեռան, մանաւանդ հրէայք տեղւոյս... Ախտն տեւեց իբր երկու ամիս»[86]։ Այդ համաճարակն, անշուշտ, զոհեր է խլել նաև հայերից և նպաստել նրանց գաղթին։

Մոգիլյովի հայ բնակչության թիվը 1820 թ., ըստ Մ. Բժշկյանի, բաղկացած է եղել 60 ընտանիքներից[87]։ Դարի վերջի համար (1895 թ.) Ք. Քուչուկ-Հովհաննիսյանը բերում է ավելի նվազ մի թիվ՝ 25 ընտանիք[88]։ Դրանից մեկ տարի հետո (1896 թ.) լույս տեսած Բրոկհաուզի և Էֆրոնի հանրագիտարանի 38-րդ հատորի տվյալներով Մոգիլյովի 32 443 բնակիչների մեջ հայ կաթոլիկների թիվը նշված է 502 հոգի[89]։

Ըստ Աֆանասև-Չուժբինսկու, 1862 թ. Մոգիլյովում հայեր այլևս չէին մրնացել։ «Կարող եմ հավաստյավ ասել,— գրում է նա,— թե ներկա ժամանակումս Մոգիլեվ քաղաքումը մնացել է հայոց ազգի միայն անունը»[90]։ Լ. Մազիրյանցը, որը Աֆանասև-Չուժբինսկուց բառորդ դար հետո է եղել Մոգիլյովում, միանգամայն այլ բան է գրել այնտեղի հայերի մասին։ «Եկեղեցումը և փողոցներումը կարելի է հանդիպել շատ անձանց բուն հայկական կերպարանքով, որից անսխալ կարելի է մակաբերել նոցա հայկական ծագումը. նոցանից շատերը գիտեն մի քանի հայերեն խոսք և իրենք պատմում են, որ նոցա հայ-

---

82 F. K. Zacharyasiewicz, Wiadomosc o ormianach w Polszcze, „Biblioteka naukowego zaklad imenia Ossolinskich", tom II, Lwow, 1842, էջ 110։

83 Wł. P. Gorski, նշվ. աշխ., էջ 23։

84 Փոտոլիոյ հայերը, «Մասեաց աղաւնի աւետարեր Հայաստանեայց», Թեոդոսիա, 15 դեկտեմբերի, 1862, էջ 280։

85 Wł. P. Gorski, նշվ. աշխ., էջ 209։

86 Համազասպ Ոսկյան, Յուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա, հատ. Ի, էջ 824։

87 Մ. Բժշկյան, նշվ. աշխ., էջ 160։

88 Մ. Շովրյան, Հայության բեկորները Ռուսիայի հարավ-արևմտյան նահանգներում։

89 Могилев на Днестре, Энциклопедический словарь, т. 38, СПб., 1896, էջ 575։

90 «Մոգիլեվյան հայք», էջ 91։

ները լավ գիտեին մայրենի լեզուն։ Սորանից կարելի է եզրակացնել, որ Մոգիլեվի հայերի բոլորովին լեհանալը և կաթոլիկանալը տեղի է ունեցել համեմատաբար վերջին ժամանակներում։ Այժմ Մոգիլեվի հայերը բազմաթիվ չեն... Մոգիլեվի հայերը, չնայելով որ կորցրել են իրենց լեզուն և կրոնը՝ իրենց հպարտությամբ են հայ անվանում, երեխանցը մկրտության ժամանակ հայկական անուններ են տալիս. Տրդատ, Տիգրան, Աշոտ, Հռիփսիմե և այլն։ Նոքա մասնավորապես պարապում են գույնզգույն կաշի պատրաստելով, բայց այս արտադրությունը, որ սկիզբը շատ էր տարածված փոքր ռուսիացիներու գունավոր կոշիկ գործածելուն պատճառով, այժմ ընկած դրության մեջ է, որովհետև սև գույնով կոշիկը հետզհետե ընդհանրանում է՝ ուստի և Մոգիլեվի հայերը աղքատացել են»[91]։

Ինչպես տեսնում ենք, Մոգիլյով-Պոդոլսկի հայերը դեռևս վերջնականապես չէին ձուլվել և կտրված լինելով հայաշատ կենտրոններից, մոռացած իրենց լեզուն և պապերի կրոնը, այնուամենայնիվ հեռավոր այդ քաղաքում շարունակում էին հայ մնալ։ Նրանք չէին մոռացել իրենց հեռավոր հայրենիքը և մի հարմար առիթով 1871 թ. համախոսական նամակ են հղում ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Չորրորդին՝ օժանդակություն և հովանավորություն ստանալու համար։ Բայց գաղութը դատապարտված էր և նրան այլևս ոչինչ չէր կարող օգնել։ Հետզհետե հեռանում է նաև այդ սերունդը և երեք տասնամյակ հետո, XX դարի սկզբներին, լեհ գիտնականն արդեն հիմք ուներ պնդելու, որ Մոգիլյովի հայերը ոչ միայն մոռացել են մայրենի լեզուն, այլև իրենց ծագումը[92]։

ИЗ ИСТОРИИ АРМЯНСКОЙ КОЛОНИИ ГОРОДА МОГИЛЕВА-ПОДОЛЬСКОГО

В. Р. ГРИГОРЯН

(Резюме)

Армянская колония украинского города Могилева-Подольского, просуществовавшая почти полтора столетия, до сих пор всесторонне не изучена. Мы попытались собрать все материалы, относящиеся к этой колонии, и вкратце изложить ее историю.

В формировании и процветании армянского поселения в Могилеве большую роль сыграла грамота кн. Потоцких от 1743 г., предоставлявшая армянам ряд привилегий, в том числе право иметь собственный суд и руководствоваться армянским судебником. В 70-х годах XVIII в. армяне составляли почти половину жителей этого города (приблизительно 6000 чел.). Их основным занятием были производство сафьяна и торговля. В начальной стадии формирования колонии был создан ремесленный цех армянских кожевников, устав которого утвердили городские власти в мае 1745 г. Чтобы обеспечить приток армян в Могилев, Потоцкие предоставили средства для постройки армянской церкви (1742—1743). В 1772 г. началось строительство новой церкви. Из армян Могилева Рафаэл Узунян (1800—1863) перевел на армянский язык ряд произведений

91 Լ. Մ ա զ ի ր յ ա ն ց, Հայոց մեծ դաղթականությունը ԺԲ դարում, էջ 135։
92 W ł. P. G ó r s k i, Նշվ. աշխ., էջ 209։

древнегреческих, латинских, французских, немецких и польских авторов. В Могилеве он с оригинала перевел «Илиаду» Гомера.

В конце XVIII в. начинается распад колонии. Этому способствовали не только стихийные бедствия (наводнения, пожар, эпидемии), но и временное уменьшение роли Могилева на торговой арене. Армяне вынужденно уходят из города. После второго раздела Польши Могилев входит в состав России. В 1810 г. по решению русского правительства в городе создается армянское епископство, которому почти полвека подчинялись армяно-католические церкви всей России. Окончательный распад колонии относится к началу нынешнего века.